ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուղղագրության ուսուցման մեթոդները և վարժությունների համակարգը 2-4-րդ դասարաններում

Ուսուցիչ՝ .....Շարոյան Կարինե Կառլենի

Ղեկավար՝ .....Շողիկ Սարգսյան (մանկ. գիտ. թեկն., դոցենտ)
անուն,ազգանուն, գիտ. կոչում աստիճան

Գյումրի -2023

Համառոտագիր

Թեմա՝ «Ուղղագրության ուսուցման մեթոդները և վարժությունների համակարգը 2-4-րդ դասարաններում»

Սույն աշխատանքում ներկայացված են ուղղագրության ուսուցման մեթոդաբանությունը և վարժությունների համակարգը 3-րդև 4-րդ դասարաններում:

Մայրենիի տարրական դասընթացի կարևորագույն նպատակներից մեկը ուղղագրության ուսուցումն է: Հայտնի է, որ ուղղագրական կարողությունները հիմնարար նշանակություն ունեն ոչ միայն աշակերտի ուսումնական ողջ գործունեության ընթացքում, այլև մարդու կյանքում ընդհանրապես: Իսկ ուղղագրական հմտությունները նախ ձևավորվում և ամրակայվում են տարրական դասարաններում:

Աշխատանքի առաջին գլխում ներկայացրել ենք այն հիմնական առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ են հաշվի առնել ողջ ուղղագրության ուսուցման շրջանում:

Երկրորդ գլխում ներկայացրել ենք ձայնավորների և բաղաձայնների վարժությունների համակարգը և ներառել ենք ինչպես դասագրքերից, այնպես էլ մեր կողմից մշակված վարժություններից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....4

ԳԼՈՒԽ 1. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2- 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ…….....…..6

1.1. Ուղղագրական հմտությունների ձևավորման մեթոդիկան….……....6

1.2. Ուղղագրության ուսուցման գործնական և զննական մեթոդների համակարգը…19

ԳԼՈՒԽ 2. 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՔ ……....29

2.1. Ձայնավորների ուսուցման վարժությունների համակարգը……. ……29

2.2. Բաղաձայնների ուսուցման վարժությունների համակարգը, քերականական ուղղագրության մեթոդական հնարները…….....….36

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….….50

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……51

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Մայրենիի տարրական դասընթացի կարևորագույն նպատակներից մեկը ուղղագրության ուսուցումն է: Հայտնի է, որ ուղղագրական կարողությունները հիմնարար նշանակություն ունեն ոչ միայն աշակերտի ուսումնական ողջ գործունեության ընթացքում, այլև մարդու կյանքում ընդհանրապես: Իսկ ուղղագրական հմտությունները նախ ձևավորվում և ամրակայվում են տարրական դասարաններում:

Ուսուցման տարրական օղակում աշակերտների մեջ ձևավորվում են գրելու մտավոր ու մեխանիկական գործողությունների տիրապետման, վայելչագրական նորմերի պահպանման ու ուղղագրական հիմնական կանոնների ճիշտ և տեղին գործադրման կարողությունները: Ուղղագրության կանոններ սահմանելիս հաշվի են առնվում ոչ միայն տառագրության նորմաները, այլև բառերի ու բառաձևերի նշանակությունը: Ուղղագրական կանոնները ձևակերպվում են ըստ լեզվի հնչույթային համակարգի և որոշակի ժամանակի համար ընդհանուր ընդունելության գտնելով՝ պարտադիր են դառնում բոլորի համար:

Այս հանգամանքով է պայմանավորված մեր **աշխատանքի արդիականությունը**:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուղղագրության ուսուցման մեթոդաբանությունը, առաջարկել մայրենի 3-րդ և 4-րդ դասարանների դասագրքերի ուսումնական նյութի հիման վրա մշակված ուղղագրության ուսուցման արդյունավետ մեթոդներ, հնարներ, վարժություններ, որոնք կբարձրացնեն ուսումնառության որակը:

Նշված նպատակն իրականացնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները՝**

1. Ուսումնասիրել մեր թեմային առնչվող մասնագիտական գրականությունը:
2. Խորացնել գիտելիքները ժամանակակից մեթոդաբանության, հատկապես՝ գործնական և զննական մեթոդների ուղղությամբ:
3. Առաջարկել դասերի և վարժությունների արդյունավետ օրինակներ:

Առաջադիր խնդիրների լուծման համար ընտրվել և կիրառվել են **վերլուծական, համեմատական, փորձարարական** մեթոդները:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է 51 համակարգչային էջից: Այն ընդգրկում է ներածություն, երկու գլուխ՝ համապատասխան ենթագլուխներով, դասի պլան, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2- 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1.1. Ուղղագրական հմտությունների ձևավորման մեթոդիկան

Ուղղագրությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևոր բաժիններից մեկն է և կրթադաստիարակչական մեծ նշանակություն ունի ապագա քաղաքացու գրագիտական մակարդակի բարձրացման համար: Ուղղագրության ուսուցումը մնում է դպրոցի և ուսուցիչների, մանկավարժ գիտնականների ու մեթոդիստների ուշադրության կենտրոնում:

Ուղղագրության ուսուցումը պահանջում է աստիճանական ու հետևողական աշխատանք: Չկա հայոց լեզվի դասընթացի մի նյութ, որ չառնչվի ուղղագրության հետ, ինչ որ ընթերցվում, գրվում, պատմում է, պիտի նաև ուղղագրական գիտելիքներ տա աշակերտներին և ամրապնդի նրանց ուղղագրական հմտությունները: Ուղղագրությունը ուղիղ գրելու կանոնների ամբողջությունն է: Տարրական դասարաններում ուղղագրության ուսուցումը չի իրականացվում որպես առանձին բաժին, սակայն առանց ուղղագրական գիտելիքների ուսուցման և ամրակայման, դրանց հմտությունների վերածման մայրենիի դասը հնարավոր չէ պատկերացնել: Տարբեր ժամանակներում ուղղագրական պահանջները տարբեր են եղել, սակայն ուղղագրության ուսուցումը՝ որպես կարևոր պահանջ, միշտ էլ իր որոշակի տեղն ու դերն է ունեցել մայրենի լեզվի ուսուցման ընդհանուր համակարգում[1]: Այսպիսով, շատ արդյունավետ կլինի օգտագործել առաջադրանքներ ու վարժությունների հնարներ, որոնք ավելի հեշտ կդարձնեն ուղղագրական հմտությունների ուսուցումը:

Օրինակ՝ 1) շատ օգտակար են ուղղագրական քարտերը, որոնք օգտագործվում են դպրոցներում: Աշակերտներին բաժանում են քարտերն ու պահանջում արտագրել բառերը և լրացնել նրանցում բաց թողած տառերը, այդ բառերով նախադասություններ կազմել: Այսպիսի աշխատանք կարելի է հանձնարարել դասի

[1]Խաչատրյան Ս., Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը տարրական դասարաններում, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի հրատ., Գյումրի, 2002, էջ 10:

ցանկացած պահին՝ սկզբում, ընթացքում, վերջում: Քարտերում տրվում են ստուգաբանական գրություն ունեցող բառեր և պահանջում՝ վերլուծել նրանց կազմությունը, բացատրել ուղղագրական կանոնը, ցույց տալ ստուգիչ բառը:

2) Օգտագործում են ուղղագրական քարտեր: Թելադրում են 10-15 բառ, հետո փոխանակում տետրերը, որ աշակերտները միմյանց սխալներն ուղղեն:

3) Կազմակերպում են շարքերի մրցություն, գրատախտակին գրում են ուղղագրական դժվարություն ունեցող երեք-չորս բառ և առաջարկում դրանցով կազմել նախադասություն, որ շարքը շուտ կազմեց, նա էլ կշահի մրցությունը:

4) Ուսուցիչը կազմում է ուղղագրական դժվարություն ունեցող բառերի ցանկ ըստ ուղղագրական կանոնների և յուրաքանչյուր դասի սկզբում կամ վերջում 5 րոպեով թելադրում որոշված քանակությամբ բառերը, ուղղում, բացատրում գրությունը և անցնում իր հիմնական նյութին: Առանձին ուսուցիչներ գրատախտակի մոտ են կանչում երկու աշակերտի և մրցություն կազմակերպում: Աշակերտները տեղից բառեր են ասում, նրանք գրում են գրատախտակին, մրցում, թե ո՞վ ճիշտ կգրի: Կամ հանձնարարում այս կամ այն ուղղագրության շուրջը օրինակներ գրել գրատախտակին: Հաղթում է նա, ով շատ օրիակներ է հիշում:

Ուղղագրության ուսուցման համար պիտի օգտագործել ուղղագրական բառարանները և բառատետրերը: Բառարանից օգտվելը աշակերտի համար պահանջ պետք է լինի:

Ուղղագրության գիտակցական յուրացման լավ միջոց է գրավորների հետևյալ ձևը: Ուսուցիչը սխալ գրված բառն ընդգծում է, իսկ լուսանցքում գրում է, թե ո՞ր կանոնի համաձայն է գրում, կամ չի ընդգծում, այլ ուղղակի լուսանցքում նշում է կանոնը, իսկ աշակերտը տվյալ տողում պիտի գտնի իր թույլ տված սխալն այդ կանոնի համաձայն: Ասենք թե, աշակերտը գրել է հանապազորյա, լուսանցքում ուսուցիչը գրում է՝ օ-ն բառամիջում, առանց այդ բառն ընդգծելու, կամ երբեմն նշում է դասագրքի էջը, պարագրաֆը:

Բոլոր դեպքերում աշակերտը պիտի բաց անի գիրքը և սովորի կանոնն ու դրանից հետո ուղղի իր թույլ տված սխալը: Բայց հետո ուսուցիչը պիտի ստուգի, համոզվի, որ ուղղումը ճիշտ է արված:

Ուղղագրության ուսուցման համար շատ օգտակար է բառերի հանդիպադրումը, երբ կազմում ենք նույն հնչումը, բայց տարբեր գրություն ունեցող զույգերը՝ **հարդ** և **հարթ**, **հորթ** և **հորդ**, **որթ** և **որդ**, **զարդ** և **զվարթ**, **սանդուղք** և **սանդուխտ**, **ուղտ** և **ուխտ**, **աղտ** և **ախտ** և այլն: Այս հանդիպադրման և համեմատության ժամանակ հարկավոր է բացատրել բառի կազմությունը, նրանց իմաստային տարբերությունը, օրինակ՝ աղտ նշանակում է կեղտ, իսկ ախտ՝ հիվանդություն:

Ուղղագրության յուրացումը պայմանավորված է ուղղագրության և բառակազմության օրինակների, կանոնների գիտակցական ու կայուն ուսուցմամբ, օգտակար վարժություններով, ուղղագրական դժվարություն ունեցող բառերը հաճախ գրել տալով, հետևողական կրկնությամբ, բառաձևերի ընտրությամբ, թույլ տված սխալների հետևողական հաշվառմամբ և նրանցով նոր բնագրերի թելադրությամբ ուղղագրությունն ուսուցանելով:

Ուղղագրության յուրացմանը մեծ չափով օգնում են դպրոցական պատի թերթերը, որոնք պիտի գրվեն բացառապես աշակերտների ուժերով, նրանց խմբագրական աշխատանքով լույս տեսնեն: Այդ թերթերում կարելի է հատուկ բաժին ունենալ՝ նվիրված ուղղագրությանը, ուր կարելի է գրել զանազան հանելուկներ, բառակազմական և ուղղագրական խաղեր, կազմակերպել մրցություն:

Ուղղագրության յուրացման համար անհրաժեշտ է իրականացնել համադպրոցական միջոցառումներ: Պետք է կազմակերպվի հարց ու պատասխանի հավաքներ, մրցույթներ, լավագույն գրավոր աշխատանքների ցուցահանդեսներ: Պիտի հատկապես հանձնարարել հայոց լեզվի որևէ ուսուցչի, որ հետևի դպրոցի պատերին փակցվող գրավոր խոսքին, թույլ չտա, որ պաստառները, հայտարարությունները, պատի թերթերը սխալներով պատին փակցվեն[2]:

Ուղղագրական օրինաչափությունների ուսուցումն ըստ էության մեծապես նպաստում է ոչ միայն ճիշտ գրելուն, այլև անսխալ կարդալու կարողության մշակմանը և հսկայական նշանակություն ունի մարդու լեզվական կուլտուրայի բարձրացման համար:

[2]Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, ԵՊՀ հրատ., 1978, էջ 160:

Ուղղագրությունն ընդգրկում է լեզուն ամբողջությամբ: Չկա լեզվական որևէ միավոր, որ գրության կանոններին ենթակա չլինի, սկսած լեզվի ամենափոքր միավորից՝ հնչյունից ու տառից մինչև ամենաածավալունը՝ խոսքը, որոնք գրվում են: Լեզվի բոլոր տարրերը անընդհատ փոփոխվում ու զարգանում են, համապատասխանաբար պետք է փոփոխվեն ու զարգանան նաև սրանց գրությունը[3]:

Ուղղագրություն կոչվում է՝ ա) քերականական օրինաչափություններից բխող, բ) ավանդական ընդունված և գ) հասարակականորեն ու պետականորեն օրինականացված ուղիղ գրելու կանոնների ամբողջությունը:

Գրությունը լինում է երեք տեսակ՝ հնչյունագիր, վանկագիր և բառագիր:

<u>Հնչյունագիր</u> կոչվում է լեզվի այն գրությունը, որի հնչյունն արտահայտվում է գրով:

Օրինակ՝ բալենի- բ–ա-լ-ե-ն-ի

<u>Վանկագիր</u> կոչվում է լեզվի այն գրությունը, որի վանկն արտահայտվում է մի գրով:

Օրինակ՝ ժապավեն – ժա-պա-վեն

<u>Բառագիր</u> կոչվում է լեզվի այն գրությունը, որի ամբողջ բառն արտահայտվում է մի գրով:

Օրինակ՝ ինքնաթիռ[4]:

Հնչյունագիրը և վանկագիրը արդիական է և գործածվում է տարրական դասարաններում, իսկ բառագիրը գրեթե չի գործածվում:

Ուղղագրական հմտությունների մշակումը բավականին բարդ է և ժամանակատար, ինչպես ցանկացած հմտության ձևավորման գործընթաց:

Հոգեբանության մեջ տարբերվում են՝

1. **Բազմակի միօրինակ կրկնությունների** հիման վրա ձևավորված հմտություններ. Այսպիսի հմտությունները հիմնականում իրենցից ներկայացնում են

---

[3]Խաչատրյան Ս., Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը տարրական դասարաններում, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի հրատ., Գյումրի, 2002, էջ 5:

[4]Ղարիբյան Ար., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947, էջ 159:

ֆիզիկական գործողություններ՝ մեխանիկական արտագրություն, վազք, թռիչք, նետում դեպի նպատակակետը և այլն:

2. Առավել **բարդ մտավոր գործողությունների կատարման հիման վրա ձևավորված** հմտություններ, որոնք իրենից ներկայացնում են «մարդու գիտակցական գործունեության ավտոմատացված բաղադրիչներ»:

Եթե աշակերտը տարբերակում է բառի հնչյունները, ճիշտ է արտաբերում դրանք (այսինքն՝ ունի զարգացած հնչյունային լսողություն և վերարտադրման կարողություն), ուրեմն նա առանց դժվարության կհաղթահարի ուղղագրության գործընթացում ծագած դժվարությունները: Ուղղագրական հմտությունների ձևավորման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է առաջին հերթին վերը նշված կարողությունների առկայությամբ: Նշանակում է անհրաժեշտ է բծախնդիր աշխատանք իրականացնել երեխաների հնչյունային լսոցության զարգացման, վերլուծական-համադրական մտածողության ձևավորման ուղղությամբ:

Ուղղագրական կարողության ձևավորման գործընթացը կազմակերպելիս պիտի հիշել, որ երեխան բառն արտասանում է ամբողջությամբ, սակայն այն գրում մաս-մաս արտասանելով և համադրելով:

Ուղղագրական հմտությունների ձևավորման համար բառերի առանձին խմբերի բազմիցս գրելը ոչնչով չի օգնում: Այդպիսի գործընթացը ավտոմատացված է, չգիտակցված. Երեխան կարող է տասն անգամ գրել միևնույն բառը (ճիշտ գրել մեխանիկորեն) և տասնմեկերորդ անգամ սխալվել:

Ցանկացած գիտելիքի ձեռքբերման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է երեխայի՝ **վերլուծելու**, **համադրելու**, **հակադրելու**, երևույթների և առարկաների միջև նմանություններ, տարբերություններ գտնելու, օրինաչափություններ նկատելու ունակությունների զարգացման աստիճանով: Քերականական կանոնների իմացությունը, անշուշտ, կարևոր է գրագետ գրելու գործընթացում, սակայն երեխաներն իրենք պետք է ձևակերպեն դրանք՝ բխեցնելով լեզվական վարժությունների միջով անցած ուղուց: Հակառակ դեպքում՝ գիտելիքը կմնա գիտելիքի մակարդակում, այն չի դառնա կարողություն, երեխան բերանացի կասի ուղղագրական կանոնը, սակայն թույլ կտա հենց այդ կանոնին վերաբերող սխալներ:

Ուղղագրական արժեք ներկայացնող բառերի շուրջ աշխատանքն իրականացվում է մայրենիի դասերի ժամանակ՝ ուսումնասիրվող ստեղծագործության բառային աշխատանքի փուլում, ինչպես նաև արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների և շարադրությունների դասերի խթանման փուլում:

Ուղղագրական հմտությունները արդյունավետորեն կմշակվեն և կդառնան աշակերտի սեփականությունը ոչ թե առանձին բառերը ճիշտ գրելու ուղղությամբ աշխատանք իրականացնելով, այլ մեկ ընդհանուր կանոնին վերաբերող տարաբնույթ վարժությունների գիտակցական կատարման ճանապարհով[5]:

Աշակերտների լեզվական մշակույթի բարձրացման համար շատ մեծ նշանակություն ունի ուղղագրության օրինաչափությունների ուսուցումը, որը նպաստում է ճիշտ գրելու և անսխալ կարդալու կարողության մշակմանը:

Ուղղագրության ուսուցման բազմազան մեթոդներ ու ձևեր կան, որոնց մեջ հիմնականում առանձնանում են երեքը, որոնք ուսումնական աշխատանքի կազմակերպման եղանակներով սկզբունքորեն տարբերվում են միմյանցից, սակայն պետք է համադրել այդ մեթոդները[6]: Դրանք են՝

1. **Ընդօրինակման մեթոդ:** Այս մեթոդի հիմքը ճիշտ գրված բառերի ընդօրինակումն է կամ արտագրությունը: Հիմնադիրը փորձնական մանկավարժության Լայն է, որն ուղղագրության ուսուցման ամենանպատակահարմար ձևը համարում է բառապատկերի ընդօրինակումն ու մտապահումը: Այս նպատակով, որպես ուղղագրության ուսուցման արդյունավետ միջոց, առաջարկում էր արտագրությունը բառապատկերի դիտումը և համապատասխան մտապահումը: Տարրական դասարանների աշխատանքային պրակտիկայում ուսուցիչներն անդրադառնում են այդ մեթոդին, գրել են տալիս ուղղագրական բառաշարքեր՝ սխալների վերլուծության ընթացքում հաճախակի ի ցույց դնելով ուղղագրական արժեք ունեցող բառի ճիշտ դրությունը, այն նույն բանը ցույց են տալիս նաև ուղղագրական պաստառի կամ աղյուսակի վրա:

---

[5]Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ., 2018, էջ 329-330:

[6]Խաչատրյան Ս., Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը տարրական դասարաններում, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի հրատ., Գյումրի, 2002, էջ 19:

Կիրառում են արտագրության բազմազան ձևեր: Այսպես օրինակ՝ հաջողությամբ գործադրվում է ընդօրինակման արտագրությունը, երբ գրատախտակի վրա ցուցադրվում են ուղղագրական արժեք ունեցող բառերը:

Օգտակար է համարվում նաև նպատակային արտագրությունը, երբ լրացնելով կամ ընդգծելով համապատասխան ուղղագրությանը վերաբերող տառը, աշակերտը առանձնակի ուշադրություն է դարձնում տվյալ բառի հեշտ գրության վրա: Ուղղագրության ուսուցման ընթացքում լայնորեն օգտագործվում է նաև գրքից արտագրությունը: Այս դեպքում սովորաբար ընտրվում է ուղղագրական արժեք ունեցող բառերով բավականաչափ հագեցած տեքստ, որպեսզի աշխատանքը նպատակային և արդյունավետ դառնա:

Ուղղագրության ուսուցման ընդօրինակման մեթոդը օգտագործվում է նաև դիտողական և նախազգուշական թելադրությունների անցկացման ընթացքում, եթե առաջին պլանի վրա դրվում է գրելիք տեքստի դիտումը կամ հնարավոր սխալներից նախազգուշացումը:

Ուղղագրության ուսուցման ընդօրինակման մեթոդը բավականաչափ արդյունավետ է հատկապես ցածր դասարաններում կամ ուղղագրության ուսուցման սկզբնական աստիճանում, և այն հաջողությամբ կարող է կիրառվել նաև ժամանակակից դպրոցում: Սակայն սա ուղղագրությամ ուսուցման միակ և ամենանպատակահարմար մեթոդը չէ:

2. **Հնչյունային մեթոդ:** Ուղղագրության ուսուցման մյուս մեթոդը, այսպես կոչված, հնչյունային մեթոդն է: Այս մեթոդի կողմնակիցները գտնում էին, որ ուղղագրության ուսուցման մեջ ամենահիմնականը հնչյունային լսողությունն է, քանի որ ընդհանրապես մարդն ավելի շատ լսելով է գրում, քան՝ դիտելով: Այս առումով էլ հնչյունային մեթոդի կողմնակիցները լայն տեղ էին տալիս տարատեսակ թելադրություններին: Պետք է խոստովանել, որ ուղղագրության ուսուցման ընթացքում ուսուցիչը լայնորեն օգտագործում է հնչյունային մեթոդը: Այս մեթոդով են տրվում հնչյունային, բացատրական, մեկնողական, ստեղծագործական և այլ տիպի թելադրությունները, ինչպես նաև ինքնաթելադրությունը:

Այսպիսով, հնչյունային մեթոդը ուղղագրության ուսուցման գործընթացում հիմնական շեշտը դնում է թելադրության՝ լսելու և գրելու, խոսքի լսողական կամ հնչյունային մտապատկերի վրա:

3. **Կանոնարկման մեթոդ:** Ուղղագրության ուսուցման մյուս տարածված մեթոդը կանոնարկման մեթոդն է: Անշուշտ, ուսուցման համար կարևոր նշանակություն ունեն լեզվական օրինաչափությունները և դրանց կանոնարկումը: Այս մեթոդի կողմնակիցները գտնում էին, որ աշակերտների համար կարևոր նշանակություն ունի ուղղագրական կանոնների համակարգը, որովհետև մի կանոնի տակ երեխաները կարող էին ընդհանրացնել հարյուրավոր բառերի ուղղագրությունն ու մտապահումը: Առանց սահմանումների ու կանոնարկման անհնար է պատկերացնել քերականության, առավել ևս ուղղագրության որևէ բաժնի ուսուցումը: Սակայն կանոններն առանց դրանց գործնական կիրառության աշակերտների մեջ ուղղագրական հմտություններ մշակել չեն կարող: Յուրաքանչյուր կանոն պետք է բխեցնել գործնական աշխատանքից, կոնկրետ դեպքում՝ ուղղագրական վարժությունից: Այն բացատրելուց և հասկացնելուց հետո վերստին կիրառել տալ գործնական աշխատանքում:

Ուղղագրության ուսուցման արդյունավետ մեթոդներից մեկն էլ **բառի կազմության ուսումնասիրումն** է: Բառի բաղադրիչների իմաստի բացատրությունը, ինչպես նաև բառը նախադասության մեջ օգտագործելը մեծապես նպաստում է աշակերտների ուղղագրական հմտությունների զարգացմանը, միաժամանակ հարստացնում նրանց բառապաշարը: Տաղանդավոր հոգեբան-մանկավարժ Գ. Էդիլյանը գտնում էր. «Ամեն մի տեսակ գրության ժամանակ գրողը պետք է պատկերացնի գրելիք բառի իմաստը, նշանակությունը»:

Նշված յուրաքանչյուր մեթոդ ունի իր առավելություններն ու թերությունները, ուստի անհնար է դրանցից որևէ մեկին նախապատվություն տալ՝ անտեսելով մյուսը: Անկասկած, այս կամ այն ուսումնական հատվածում այդ մեթոդներից որևէ մեկի գործադրումը կարող է ավելի արդյունավետ լինել, քան մյուսինը՝ նայած ի՞նչ է ուսուցանվում և ո՞ր դասարաններում է ուսուցանվում, որովհետև այս կամ այն մեթոդն իր նախադրյալներով երբեմն ավելի է համապատասխանում ուսուցանվող թեմային: Այս մեթոդներից ոչ մեկը չի կարող ժխտել և ոչ էլ հակասել մյուսին,

ընդհակառակը, խելացիորեն պետք է կարողանալ համադրել այդ մեթոդները, համապատասխանեցնել այս կամ այն թեմայի պահանջներին և արդյունավետ ու նպատակային ձևով գործադրել ուսուցման գործընթացում: Դասի հետաքրքրությունն ու արդյունավետությունը բազմազան մեթոդների ու մեթոդական ձևերի խելացի համադրման ու տեղին օգտագործման մեջ է, որին պետք է ձգտի յուրաքանչյուր ուսուցիչ: Ուղղագրական կանոնները սովորաբար ձևավորվում են ըստ լեզվի հնչյունային համակարգի և, որոշակի ժամանակի համար ընդհանուր ընդունելություն գտնելով, պարտադիր են դառնում բոլորի համար: Միասնական ապահովում է մտքերի գրավոր հաղորդակցման ճշտությունն ու հեշտությունը:

Ուղղագրության ուսուցման արդյունավետ եղանակներից մեկն աշակերտների կատարած ուղղագրական սխալների ճիշտ ու խելացի դասդասումն է և այդ սխալները կանխելու համար կազմակերպված հետևողական և նպատակային աշխատանքը: Գրավոր աշխատանքներում տարբեր տիպի սխալներ են հանդիպում, սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք կարելի է դասդասել չորս խմբերում, որոնց մասին մեթոդական գրականության մեջ բավականաչափ խոսվել է: Դրանք են՝

1) հնչյունական
2) ավանդական
3) քերականական
4) բարբառային[7]

Հնչյունական: Հնչյունական տիպին են պատկանում այն սխալները, որոնք տեղի են ունենում գրությամբ և արտասանությամբ չտարբերվող բառերի մեջ: Այս տիպի սխալների մեջ կարող են լինել հետևյալ դեպքերը.

1) Բառի մեջ տառ է բաց թողնվում. օրինակ՝ կտրեղեն փոխարենը կտորեղեն, շերմի փոխարենը շերամի, բաի փոխարենը բարձի և այլն:

2) Բառի մեջ տառ է ավել գրվում. օրինակ՝ մետաքսեղղեն փոխարենը մետաքսեղեն:

---

[7]ԽաչատրյանՍ., Ուղղագրությանև ուղղախոսության ուսուցումը տարրական դասարաններում, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի հրատ., Գյումրի, 2002, էջ 11-12:

3) Հնչյունը տեղափոխվում է. օրինակ՝ պատրվաստած փոխարենը պատրաստված, աշխհար փոխարենը աշխարհ և այլն:

4) Տառը հետ և առաջ է գրվում. օրինակ՝ միյան փոխարենը միայն, հայրուր փոխարենը հարյուր, սուն փոխարենը սյուն և այլն:

Այս տիպի սխալների պատճառները շատ են: Այս տիպի սխալների պատճառները կարող է լինել աշակերտի հոգնածությունը, մանավանդ վերջին դասերին, երբ աշակերտն ընդունակ չի լինում մեծ լարում պահանջող աշխատանք կատարելու:

Երկրորդ պատճառը կարող է լինել աշակերտի ցրվածությունը անուշադրությունը և կենտրոնանալու անկարողությունը:

Երրորդ պատճառն այն է, որ աշակերտը ճիշտ բառապատկեր չունի և գրավոր վերարտադրելիս սխալ է կատարում: Եթե աշակերտը գրաճանաչություն անցել է անճիշտ մեթոդով, բնական է, որ նա բառը սինթեզի և անալիզի ենթարկելու մեծ հմտություն չի ունենա, ուստի և հնչյունական շատ սխալներ կանի:

Չորրորդ պատճառն այն է, որ շատ հաճախ բարբառայնության ազդեցության տակ աշակերտները սխալ են արտասանում բառը[8]:

Աշակերտների կատարած սխալները վերացնելու համար ուսուցիչը պետք է կատարի տարատեսակ վարժություններ՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այն համապատասխանեցնելով կատարված սխալի տիպին:

Աշակերտներին հաճախ պետք է ցուցադրել գործածության մեջ եղած տպագիր և ձեռագիր տառատեսակները, գրել ու արտասանել տալ բառը, տեսողական տպավորությունը կապել գրավոր աշխատանքի տարբեր տեսակների կատարման հետ: Որպես սխալը կանխելու միջոց, հաճախ թելադրվող բառը կարելի է բաժանել վանկերի, հիշեցնել, թե ինչ հնչյուններ կան նրա կազմում: Անհատական մոտեցում պետք է ունենալ այն աշակերտների նկատմամբ, որոնց թույլ տված ուղղագրական սխալները բխում են նրանց ցրվածությունից: Այդպիսիներին պետք է ավելի քիչ ծանրաբեռնել, գրելու ընթացքում հաճախ նրանց ցույց տալ իրենց թույլ տված սխալները և ուղղել:

[8]Ղարիբյան Ար., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947, էջ 160-161:

Հնչյունային սխալները հիմնականում կապվում են ուղղախոսության ճիշտ արտասանության և հնչյունային լսողության հետ, ուստի հենց այդ ուղղությամբ էլ պետք է տարվեն հիմնական աշխատանքները՝ այդ տիպի սխալները կանխելու և վերացնելու համար:

2) **Ավանդական:** Ավանդական տիպի սխալները հանդիպում են այն բառերում, որոնց գրությունը չի համապատասխանում արտասանությանը: Սխալների այդ տիպը կոչվում է ավանդական այն պատճառով, որ հետևանք է մեր գրավոր լեզվի պատմական զարգացման համար: Նման սխալներն ուղղելու համար անհրաժեշտ է ուսուցանել բառի մեջ ճիշտ գրությունը, ապա ստեղծել աշակերտի մեջ բառի տեսողական մտապատկեր: Ավանդական տիպի սխալների պատճառ հանդիսացող բառերի թիվը հայերենում հասնում է 3-4 հազարի:

Աշակերտներին պետք է բացատրել, որ մեր լեզվի մեջ գոյություն ունի բաղաձայն հնչյունների եռաստիճանություն՝ ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ: Ձայնեղներն արտասանությամբ նման են շնչեղ խուլերին, իսկ գրությամբ տարբեր են, օրինակ՝ սրբիչ-սրփիչ, կարագ-կարաք: Մեր բոլոր բաղաձայնները, բացի ժ, շ, լ-ից, շատ դեպքերում տարբեր արտասանություն և գրություն ունեն, ուրեմն կարող են սխալ գրության տեղիք տալ: Հենց սա էլ ուսուցման տեսակետից որոշակի բարդություն է ստեղծում: Աշակերտների մեջ պետք է մշակել լսածն ըստ գրության ընդունված կարգի ճիշտ գրելու հմտություն (միրք-միրգ, եխփայր-եղբայր և այլն), որը պայմանավորված պետք է լինի տեսողական և լսողական տպավորությունների միջև որոշակի ու կայուն կապեր ստեղծելու հետ, որպեսզի մի ձևով լսածը աշակերտը կարողանա համոզված կերպով մի այլ ձևով գրի առնել՝ ըստ այդմ պահպանելով գրության և արտասանության միջև պայմանականորեն առաջացած անհամապատասխանության օրինաչափությունները:

Ավանդական գրություն ունեցող որոշ բառեր կարելի է գրել գրատախտակին և մինչև դասի ավարտը չմաքրել, որպեսզի աշակերտների մեջ համապատասխան տպավորություններ ձևավորվեն, և նրանք կարողանան որոշակի կապ ստեղծել լսածի և գրատախտակին գրված բառաձևերի միջև: Ուսուցիչը աշխատանքի ընթացքում պետք է նկատի, թե ավանդական տիպի որ սխալներն են, որ ընդհանուր են դասարանի համար ու պարբերաբար կրկնվում են, և համապատասխան

աշխատանքներ կազմակերպի այդ սխալների վերացման համար, ինչպիսիք են՝ համապատասխան ուղղագրական կանոնի կրկնությունը, վարժությունների ու գործնական աշխատանքների անցկացումը, բառացանկերի կազմումը, ուղղագրական բառատետրերի ստեղծումը և այլն:

3) Քերականական: Քերականական տիպի սխալները հիմնականում բխում են քերականական գիտելիքներին չտիրապետելուց: Այս սխալները կանխելու համար պետք է բազմազան քերականական վարժություններ կատարել: Գրավոր աշխատանքում ամենից հաճախ հանդիպողները բազմազան քերականական սխալներ են, որոնց վերացման միակ միջոցը քերականական օրինաչափությունների ուսուցումն է, ուսուցված գիտելիքների գործնական կիրառումը: Սխալների պատճառը քերականություն չգիտենալն է և քերականական վարժություններ չկատարելը:

4) Բարբառային: Բարբառային տիպի սխալները կատարում են այն պատճառով, որ գրական լեզուն բարբառների համեմատությամբ ունի թե՛ հնչյունական, թե՛ քերականական տարբերություններ[9]: Նշանակում է՝ բարբառային տիպի սխալները լինում են.

1. Հնչյունական, երբ գրողի բարբառի և գրական արտասանությունների միջև տարբերություններ կան. օրինակ՝ դասագարգ-դասակարգ, շաբիկ-շապիկ, աշագերտ-աշակերտ և այլն:

2. Քերականական, երբ գրողի բարբառի և գրականի քերականությունների միջև տարբերություններ կան[10]:

Եթե աշակերտը գրական լեզվին դեռևս լավ չի տիրապետում, բարբառային սխալների առկայությունը պատճառաբանվում է: Կան երեխաներ, որոնք հաճախ բաց են թողնում որոշիչ հոդը, քանի որ իրենց բարբառում այդ հոդը չի արտասանվում, օրինակ՝ Աշակերտ (ը) ուսուցչին լսում է: Հետևողականորեն աշակերտներին պետք է առաջարկել ոչ միայն իրենց բանավոր խոսքում և ինքնուրույն գրավոր աշխատանքներում օգտագործած, այլև ընթերցանության տեքստերում հանդիպած

[9]ԽաչատրյանՍ., Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը տարրական դասարաններում, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի հրատ., Գյումրի, 2002, էջ 13-14:
[10]Ղարիբյան Ար., Հայոցլ եզվի մեթոդիկա, Երևան, 1947, էջ 164:

բարբառային բառերը փոխարինել դրանց գրական համարժեքներով, դրանք օգտագործել տալ խոսքի մեջ:

Այդ դժվարին հարցը լուծելու համար ամենից առաջ մեծ ուշադրություն պետք է դարձնել բառերի ճիշտ արտասանության ու հնչյունների ճիշտ արտաբերման վրա: Այս նպատակով հաճախ պետք է օգտագործել վարպետ ասմունքողների ձայնագրված խոսքը կամ ձայնագրել լավ ասմունքողներին ու դրանց լսելու ժամանակ երեխաների ուշադրությունը հրավիրել բառերի կամ հնչյունների արտասանության վրա: Բարբառախոս երեխաներին հայերենի ուղղագրությունը սովորեցնելը շատ դժվար է, որովհետև նման աշակերտներին նախ գրական լեզվի արտասանությունը պետք է սովորեցնել, իսկ հետո նաև գրությունը: Դրա համար դասարանում պետք է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ ոչ մի սխալ արտասանություն չվրիպի ուսուցչի և աշակերտի ուշադրությունից, որ սխալ լսելիս հենց իրենք՝ աշակերտները անմիջապես ուղղեն այն:

Ուղղագրության ուսուցման համար հատկապես լուրջ ուշադրություն պետք է դարձնել սխալները կանխելուն: Այս տեսակետից շատ օգտակար կարող է լինել ուղղագրության տարբերակված կամ անհատականացված ուսուցումը, որը հենվում է աշակերտի լեզվական տվյալների վրա, հաշվի է առնում աշակերտի թույլ տված սխալներն ու դրանց հաղթահարման պայմանները:

Բառի ուղղագրությունն ստուգելու շատ օգտակար հնար է բառի թեքումը: Աշակերտներին պետք է սովորեցնել բառի ուղղագրության վրա կասկածելիս թեքել, փոխել բառը, օրինակ՝ փախչել-փախա, խիղճ-խղճալ և այլն:

Այսպիսով, ուղղագրության տարրական դասընթացի ու նրա ուսուցման վերաբերյալ գոյություն ունեցող այս վերլուծությունն անհրաժեշտություն էր՝ այդ բնագավառում նոր միջոցներ ու մեթոդական հնարներ առաջադրելու համար, որը մեզ հնարավորություն կտա հենվելու ուղղագրության ուսուցման վերաբերյալ մեթոդական գրականության ու դպրոցի փորձի վրա[11], սակայն ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում և նա պետք է ընտրի թե տվյալ դասի ընթացքում ինչ

[11]ԽաչատրյանՍ., Ուղղագրությանն ուղղախոսության ուսուցումը տարրական դասարաններում, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարան հիրատ., Գյումրի, 2002, էջ 13-14:

մեթոդ կիրառի, որն է առավել արդյունավետ՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունները:

1.2. Ուղղագրության ուսուցման գործնական և զննական մեթոդների համակարգը

Դաստիարակչական գործունեությունը գլխավորապես ուղղված է աշակերտի այն որակների ձևավորմանը, որով էլ պայմանավորվում են աշակերտի հարաբերությունները հասարակության հետ: Իսկ այդ ամենը կատարվում է ուսուցման սկզբունքների հիման վրա: Աշակերտի հնարավորությունները բավականին մեծ են: Հոգեբանության և աշակերտ ոլորտի մասնագետները ուսումնասիրություններից հանգել են այն եզրակացության, որ վերջին տարիներին երեխաները ձեռք են բերել յուրացնելու այնպիսի կարողություններ, որոնք առաջ հատուկ են եղել ավելի բարձր տարիքի աշակերտներին: Աշակերտներին որ հնարավորությունները մանկավարժների ու ծնողների առջև խնդիր են դնում գտնել ավելի արդյունավետ ուղիներ այդ հնարավորություններն օգտագործելուու կատարելագործելու համար: Աշակերտին հաղորդել ոչ միայն բնության ինչ-որ երևույթ, այլև տալ դրա ընդհանուր կապերը, նրանց մեջ դաստիարակել այնպիսի հետաքրքրություններ, հատկություններ, որոնք նախկինում հատուկ էին միայն ավելի բարձր զարգացման աստիճանի հասած տարիքի:

Ուղղագրությունը ճիշտ գրելու կանոնների ամբողջությունն է: Այդ կանոնները ստեղծելիս հաշվի են առնվում հնչման ու տառագրության բոլոր առանձնահատկությունները: Ուղղագրության կանոններ սահմանելիս հաշվի են առնվում ոչ միայն տառագրության նորմերը, այլև բառերի ու բառաձևերի նշանակությունը: Ստեղծվում են գրության խմբեր, որոնց ամփոփման շնորհիվ սահմանվում են ուղղագրության կանոններ:

Հայերենի ուղղագրության մեջ մտնում են.

1. ձայնավորների և բաղաձայնների ուղղագրությունը,
2. երկհնչյունների ուղղագրությունը,
3. քերականական ուղղագրությունը:

Ուղղագրական կանոնները ձևակերպվում են ըստ լեզվի հնչույթային համակարգի և որոշակի ժամանակի համար ընդհանուր ընդունելություն գտնելով՝ պարտադիր են դառնում բոլորի համար:

Հայոց լեզվի ուղղագրությունը կապվում է հայ գրի և գրականության ստեղծման հետ և նախապես եղել է հնչյունային ուղղագրություն: Ըստ այդմ էլ հին հայերենում՝ գրաբարում, բառերը գրվել են այնպես, ինչպես արտասանվել են, օրինակ՝ մարդ, լոյս, զուարթ, ծառայ և այլն: Այդ ուղղագրությունը, որը կոչվում է գրաբարյան կամ հին ուղղագրություն, որով էլ մեծածավալ գրականություն է ստեղծվել, միշտ նույնը չի մնացել, և, պայմանավորված լեզվի հնչյունական կազմում տեղի ունեցող փոփոխություններով, իր հերթին նույնպես որոշակի փոփոխություններ է կրել:

Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության ուսուցման բազմաթիվ մեթոդներ և հնարներ կան, որոնցից առանձնահատուկ տեղ են գրավում գործնական և զննական մեթոդները:

Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին: Ուսուցչի կողմից ակտիվ մեթոդների յուրացումն առանց աշակերտի անմիջական մասնակցության անհնար է: Մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ: Դրանք նպատակ ունեն զարգացնել ու սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները: Մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր չկան: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել այդ «եզակի» իրավիճակին:

Զննական և գործնական մեթոդները համարվում են ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման և իրագործման մեթոդներ, գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռքբերող, իմաստավորող և ամրակայող մեթոդներ[12]:

Զննական մեթոդներ: Այս ենթախմբի մեջ են մտնում իլյուստրացիայի և դեմոնստրացիայի մեթոդները: Զննական են համարվում այն մեթոդները, որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի

[12]Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանկավարժություն, Ե., 2005, էջ 160-161:

դիտազննական պարագաներից և ուսուցման տեխնիկական միջոցներից: Զննականությունը հնարավորություն է ընձեռում օբյեկտներին, առարկաներին ծանոթանալ բնական վիճակում և կամ՝ սիմվոլների միջոցով (օրինակ՝ պայմանական նշաններ, գծագրեր, սխեմաներ, նկարներ և այլն): Բացի զննական պարագաներից, ժամանակակից դպրոցում օգտագործում են ուսուցման տեխնիկական, էկրանային միջոցներ: **Իլյուստրացիայի** մեթոդը խնդիր է դնում կամ պահանջում է ուսուցման գործընթացում ուսումնական նյութը սաներին հաղորդելիս կիրառել դիտազննական պարագաներ՝ քարտեզներ, պաստառներ, գծագրեր, նկարներ, դիմանկարներ և այլն: Ահա դրանց ցույց տալու վերլուծությունը կոչվում է իլյուստրացիա: Ուսուցման արդյունավետությունն ավելի բարձր է լինում այն դեպքում, երբ պատմելը, զրույցը, բացատրությունը, դասախոսությունը զուգակցվում են իլյուստրացիային, այսինքն՝ ցուցադրմանը:

Դեմոնստրացիա մեթոդի էությունը նույնպես ցուցադրումն է: Օրինակ՝ ցուցադրվում են գործիքներ, սարքեր, տեխնիկական միջոցներ, զանազան պրեպարատներ, ֆիլմեր և այլն: Նշանակում է՝ դեմոնստրացիայի մեթոդը սովորաբար կապ ունի դրանց հետ: Բանն այն է, որ դեմոնստրացիայի դեպքում ցուցադրմանը ուղեկցում է շարժումը և ահա ի տարբերություն իլյուստրացիայի, այն կոչվում է դեմոնստրացիա: Սակայն իմաստը մնում է նույն ցուցադրումը: Ուսուցման տեխնիկական միջոցների ներդրումը ուսուցման գործընթացում ընդլայնել է զննական մեթոդների ֆունկցիան:

Զննական միջոցների կիրառումը պահանջում է պահպանել մի շարք մանկավարժական պայմաններ: Այսպես, օրինակ, ա) օգտագործվող զննականությունը պետք է համապատասխանի սովորողների տարիքային հնարավորություններին, բ) զննականությունը պետք է օգտագործել դասի համապատասխան փուլերում, գ) երևույթը, գործընթացը, իրադարձությունը այնպես պետք է ցուցադրել, որպեսզի դրանք տեսանելի լինեն բոլոր աշակերտների համար, դ) աշակերտներից պահանջել զննական պարագայի մեջ գտնել որոնելի ինֆորմացիան, ե) իլյուստրացիայի ցուցադրման համար, նախօրոք, ուսումնական նյութում պետք է առանձնացնել գլխավորը, էականը և հայտնել աշակերտներին՝ ցուցադրման ժամանակ նրանց ուշադրությունը դրանց վրա բևեռելու համար: Իլյուստրացիայի և

դեմոնստրացիայի ցայտուն օրինակ կարող է հանդիսանալ ուսումնական ֆիլմի ցուցադրումը[13]: Օրինակ, ուղղագրության ժամանակ ձայնավորները ուսումնասիրելիս, կարելի է կազմակերպել կարճամետրաժ ֆիլմ, որտեղ յուրաքանչյուր ձայնավոր հանդես կգա իր կարևորությամբ և դերով լեզվի մեջ: Այնուհետև ուսուցիչը կարող է տալ աշակերտներին նախօրոք կազմած հարցեր, նախանշել իր ասելիքը, կատարել ցուցադրվող ֆիլմի ամփոփում, որի ընթացքում պետք է կատարի որոշակի եզրահանգումներ: Զննման մեթոդը համարվում է, կրթության բովանդակության բնույթին համապատասխան, ուսուցման զարգացնող միջոց:

Այս մեթոդի կիրառման ժամանակ ուսուցիչը ուսուցումը կազմակերպում է այնպես, որպեսզի ապահովի աշակերտների ակտիվ մասնակցությունը: Այս մեթոդի հիմքում ընկած են աշակերտների կողմից սովորելու համար նախատեսված իրի, առարկայի, երևույթի հետ անմիջական շփումը, բնական կամ պատկերների մոդելների, մակետների հետ ծանոթացումը: Ուսուցչի խնդիրը շարունակում է մնալ աշակերտներին ինքնուրույնաբար կարդացածը հասկանալ սովորեցնելը, գլխավորը երկրորդականից տարբերելը, ինքնուրույն եզրահանգումներ կատարելը:

Ընդհանրապես զննական պարագաները հիմնականում նախատեսվում են աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար և, որպես այդպիսիք՝ մեծապես նպաստում են ուսումնական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, մատուցված նյութի յուրացմանն ու ամրապնդմանը, երեխաների ինքնուրույնության զարգացմանը, սովորած գիտելիքների գործնական կիրառությանը[14]:

Ուղղագրության ուուցման շրջանում գործադրելի են հետևյալ զննական պարագաները, որոնցից ամեն մեկն ունի իր ուրույն խնդրներն ու նպատակները և պետք է տեղին և ճիշտ օգտագործվի, որպեսզի պահանջված արդյունքը տա:

Ուղղագրությունը նկարներով: Զննական նյութերի այս համալիրը ներկայացնում է այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանող հնչյունով սկսվող բառ-առարկայի նկարը, որը ցուցադրվում է հնչյունային վերլուծություն կատարելուց առաջ և այդ վերլուծության համար հիմանական մեկնաբառ դառնում: Սովորաբար վերցված են լինում առարկայական իմաստ արտահայտող այնպիսի բառեր, որոնց

[13]Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանկավարժություն, Ե., 2005, էջ 166-167:
[14]Ա. Տեր –Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Ե., 1980թ., էջ 120:

մեջ նոր ուսուցվող հնչյունը լսվում է բառասկզբում, սակայն լինում է նաև դեպքեր, երբ նոր ուսուցվող հնչյունը հանդես է գալիս բառավերջում կամ բառամիջում՝ նայած նպատակահարմարությանը:

Վայելչագրական պաստառներ: Գրելու ուսուցմն աշխատանքը նպատակային և արդյունավետ դարձնելու համար շատ կարևոր նշանակություն ունեն այսպիսի պաստառները, որոնք կօգնեն ուսուցչին աշխատանքը ճիշտ կազմակերպելու, գրելու ուսուցման հիմքում արդի գիտական պահանջները դնելու: Դրանք որոշակի համակարգի մեջ տալիս են վայելչագրական նորմաները, որոնք գրելու ալգորիթմի ձևավորման տեսակետից կարևոր նշանակություն ունեն:

Թեմատիկ նկարներ: Այսպիսի մեծադիր նկարները օգտագործվում են ինչպես նախապատրաստական զրույցի, այնպես էլ խոսքի զարգացման վարժությունների համար: Արդեն պատրաստված է այդպիսի նկարների ու դրանց շուրջ տարվող անհրաժեշտ վարժությունների մի հարուստ համալիր, որը կոչվում է «Մենք սովորում ենք» և կարող է նախատեսված լինել ուղղագրության ուսուցման համար տարրական դասարաններում գործադրելու նպատակով:

Առարկայական նկարների պաստառներ: Այսպիսի զննական նյութեր կարող են պատրաստել բոլոր ուսուցիչները և օգտագործել ուղղագրական վերլուծությունների համար: Յուրաքանչյուր պաստառներում կարող են ընդգրկվել մի շարք առարկայական նկարներ, որոնց անուններում բաղաձայն կամ ձայնավոր հնչյունն օգտագործված է բառասկզբում, բառամիջում ու բառավերջում: Այս պաստառների շուրջ տարվող վերլուծական վարժությունները նպաստում են ինչպես բառերը ճիշտ գրելուն, այնպես էլ բառապաշարի հարստացմանը:

Գծային մոդելներ: Զննական նյութի մեջ առանձնահատուկ արժեք ունեն գծային մոդելները, որոնք մի կողմից լեզվական վերացական նյութը նյութականացնում են ու հասանելի դարձնում երեխաներին, իսկ մյուս կողմից նպաստում են երեխաների վերացական մտածողության զարգացմանը: Գծային մոդելների լայն գործադրություն ունեն ուղղագրության ուսուցման աշխատանքներում:

Այլ նյութեր: Ուղղագրության ուսուցման համար որպես զննական նյութ կարող են օգտագործվել ուղղագրական խաղերը, նկարներով և պատկերներով քարտերը,

գրավոր հանձնարարությունների անհատական քարտերը, ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցները և այլն:

Չափազանց կարևոր է, որ խոսքային և զննական մեթոդները հանդես գան միասնաբար: Առարկան ու նրա անվանումը երեխան պետք է միասնաբար յուրացնի:

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետաիմացություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը:

Ցուցադրման մեթոդը զննականության դիդակտիկական սկզբունքի կենսագործման հիմնական ուղին է:

Կարելի է ցուցադրել կոնկրետ առարկան, առարկայի նկարը, գծապատկերը: Բոլոր դեպքերում էլ ցուցադրումը պետք է լրիվ ու սպառիչ լինի: Սկզբում պետք է ցուցադրել առարկան ամբողջությամբ՝ուսումնասիրվող առարկայի վերաբերյալ ամբողջական պատկերացում տալու համար, հետո, երբ ամբողջի տպավորությունն արմատավորված է, կարելի է անցնել հիմնական մասերին, այնուհետև երկրորդականներին, և, վերջապես, մանրամասներին, մինչև որ առարկան ուսումնասիրվի իր բոլոր կողմերով, իր հիմնական ու երկրորդական հատկանիշներով:

Գործնական մեթոդներ: Ուսուցման գործնական մեթոդների շարքին են դասվում վարժությունները: Բոլոր տեսակի վարժությունները իրենց բնույթով բաժանվում են գրավոր, բանավոր, գրաֆիկական, ուսումնական-աշխատանքային վարժությունների, լաբորատոր-գործնական աշխատանքների:Դրանցից յուրաքանչյուրն իրականացնելիս սովորողները կատարում են մտավոր և գործնական աշխատանք: Այսպես, օրինակ, աշակերտն իր ուսումնասիրած նյութը պատմում է, այսինքն՝ վարժվում է վերարտադրելու մեջ: Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա են և՛ մտավոր, և՛ գործնական կողմերը: Աշակերտը գրավոր աշխատանքը կատարելու նպատակով նույնպես նախապատրաստվում է, այսինքն՝ կատարում է մտավոր աշխատանք, և ապա այն իրականացվում է գործնականորեն: Ուրեմն վարժությունների մեթոդները

կիրառելիս մտավոր և գործնական աշխատանքները փոխկապակցվում են կանխանշած նպատակին հասնելու համար:

Բանավոր վարժությունը զարգացնում է սովորողների տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հիշողությունը, մտապահումը, խոսքի կուլտուրան, կայունացնում է ուշադրությունը և հոգեկան այլ գործընթացներ: Բանավոր վարժությունը տնտեսում է ժամանակը:

Գրավոր վարժությունը նպատում է սովորողների ձեռք բերած գիտելիքների ամրապնդմանը ու կայունացմանը, ինչպես նաև նրանց կարողությունների ու հմտությունների մշակմանը:

Գրաֆիկական վարժությունները հնարավորություն են ընձեռում սովորողներին ավելի հեշտ և ավելի ճիշտ ընկալել ուսումնական նյութը: Զարգացնում է նրանց դիտունակությունն ու ուշադրությունը: Գրաֆիկական վարժություններից են զանազան սխեմաների, դիագրամների, գծագրերի, ալբոմների, պաստառների պատրաստումը և օգտագործումը:

Ուսումնական-աշխատանքային վարժությունների շարքին են դասվում հատկապես այն գործնական աշխատանքները, որոնք ունեն արտադրական նշանակություն: Այլ կերպ ասած՝ իրենց իրացրած գիտելիքները կիրառում են աշխատանքային գործունեության մեջ:

Բացի վերը քննարկված վարժություններից, կան նաև **մեկնաբանական վարժություններ**, որոնց կատարումը հնարավորություն է ընձեռում սովորողներին իմաստավորել իրենց կատարած գործնական աշխատանքները, գործողությունները, կատարվող և կատարվելիք գործառույթները: Սովորողների կողմից գործադրվող մեկնաբանական մեթոդը օգնում է ուսուցչին արագորեն հայտնաբերել նրանց սխալները և հենց նույն պահին վերացնել դրանք:

Վարժությունների մեթոդների կիրառումը ուսուցչից պահանջում է կատարել հետևյալ աշխատանքները. առաջին՝ աշակերտներին պարզաբանել վարժության նպատակը, երկրորդ՝ ցույց տալ, բացատրել,թե ինչպես կատարել այս կամ այն վարժությունը, ինչ գործողություններ ծավալել, երրորդ՝ հետևել կատարման ընթացքին, չորրորդ՝ վերլուծել արդյունքները, նշել ուղիները՝ առաջիկայում սխալներից, թերություններից խուսափելու համար:

Գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ թեմաներ ուսումնասիրվելուց հետո: Դրանք կրում են ընդհանրացնող բնույթ: Նման աշխատանքները կարելի է կազմակերպել և անցկացնել դպրոցից դուրս: Գործնական մեթոդների դասին են դասվում դիդակտիկական խաղերը և մեթոդները: Գործնական մեթոդները, գործունեության տարբեր տեսակները կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ. 1.Առաջադրանքի պլանավորում, 2.Առաջադրանքի կատարում, 3.Կատարման ընթացքի խթանում, 4.Վերահսկողություն, 5.Կատարված գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, թերությունների, սխալների հայտնաբերում[15]:

Գործնական պարապմունքները զբաղեցնում էին ուսումնական օրվա գրեթե կեսը: Ուսուցումը հնարավոր չէ հասցնել հիմնավորվածության աստիճանի, առանց հաճախակի կրկնությունների ու վարժությունների:

Ամենի առաջ պետք է նշանակալի տեղ հատկացնել բանավոր վարժություններին: Դրանք պետք է սկսվեն ուսուցչի կողմից նոր նյութը շարադրելուց և հարցերի միջոցով մութ կողմերը պարզաբանելուց հետո: Ուսուցիչը պետք է աշակերտներին հարցնի նոր շարադրած նյութը. սկզբում ուժեղներին, հետո՝ թույլերին, որպեսզի վերջիններս նյութը մի քանի անգամ լսելուց հետո կարողանան վերարտադրել:

Կարևոր նշանակություն ունեն նաև գրավոր վարժությունները: Դրանք պետք է սկսել գրաճանաչության ուսուցմանը զուգահեռ: Ինչը ձեռք է բերվում ընթերցանության ժամանակ պետք է ամրապնդվի գրավորի միջոցով:

Գործնական մեթոդներից մեկն էլ, այսպես կոչված, **ընդօրինակման մեթոդն** է: Ընդօրինակման մեթոդը կարելի է կիրառել բոլոր արվեստների ավանդման ժամանակ և կարող է լինել բանավոր, գրավոր կամ գործնական բնույթի:

Զննական և գործնական մեթոդները փոխկապակցված են:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի զննական և գործնական մեթոդներ կան ուղղագրական դժվարությունները հաղթահարելու համար: Գործնական և զննական մեթոդները սովորածը պարզելու հնարներ են, որոնք գործածվում են դասին համապատասխան:

[15]Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանկավարժություն, Ե., 2005, էջ 167-170

1.Ֆրայերի մոդելը

Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ:Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

Ր-ից հետո լսվող թ-ն գրվում է թ:	
Որթ, հորթ	որդ

2. Գիտելիքի դոմինո

Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:Քայլ 1– Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից: Քայլ 2–Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին:Քայլ 3–Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը: Քայլ 4–Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը: Քայլ 5 – Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի

կարևոր հասկացությունը կամ միտքը:Քայլ 6- 2-3 աշակերտ արտահայտում է վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

3. Հարցեր, որոնք հնարավորություն են տալիս պարզել, թե ինչ չափով են աշակերտները յուրացրել թեման:

Ինչո՞վ են ուղղագրական կանոնները իրար նման: Ո՞րն է նյութի հիմնական գաղափարը:Որո՞նք են ուղղագրության ուժեղ և թույլ կողմերը:Ինչպե՞ս են ուղագրական կանոնները կապված միմյանց հետ: Համեմատե՛ք հայերենի ուղղագրական առանձնահատկությունները ըստ լեզվի հնարավորությունների:Որո՞նք են ուղղագրական դժվարությունների հաղթահարման և տարբերակները:

4. Մետաիմացության թերթիկ

Այս թերթիկը լրացնելիս կատարե՛ք հետևյալ չորս քայլերը՝ 1. Ընթերցե՛ք հարցերը: Դրե՛ք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք: Դրե՛ք «՞» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք: 2. Գրե՛ք իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում: 3.Մեկ անգամ ևս ընթերցեք այն հարցերի պատասխանները, որոնց վրա դրել եք «՞» նշանը:
4. Ստուգե՛ք՝ արդյոք ճիշտ եք պատասխանել այն հարցերին, որոնց դիմաց աստղանիշ էիք դրել[16]:

Եվ այս շարքը կարելի է շարունակել, որոնք բոլորն էլ տալիս են հնարավորություն ուսուցչին պարզելու աշակերտների ունեցած գիտելիքները արդեն սովորած թեմայից: Եվ ինչպես տեսնում ենք, թվարկված մեթոդներից և նկարագրված հնարներից զննական և գործնական մեթոդները կիրառվում են հիմնականում արդեն աշակերտներին տրված թեմայից հետո երեխաների գիտելիքների ստուգման համար որպես լավագույն տարբերակներն: Պետք է նշել նաև, որ չնայած գիտության զարգացման այս ժամանակաշրջանում բավականին կիրառելի են նաև ավանդական մեթոդները, որոնց համադրումը ժամանակակից մեթոդների հետ կարող է բավականին լավ արդյունքի հանգեցնել:

[16]Ս. Խաչատրյան,Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան2020, էջ 34:

ԳԼՈՒԽ 2. 2-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՔ

2.1. Ձայնավորների ուսուցման վարժությունների համակարգը

Ձայնավորները, վանկարար հատկություն ունեցող հնչյուններ են, որոնց արտասանությունը կատարվում է ձայնալարերի թրթռումով և տեղայնացված չէ: Ձայնավորներն ամբողջապես կազմված են երաժշտական ձայնից, ունեն նաև արտասանական առանձնահատկություններ (օդի թույլ հոսանք, առանց արգելքի արտաբերություն, լարվածության չտեղայնացում), որոնցով նրանք տարբերվում են բաղաձայններից:

Ժամանակակից գրական հայերենն ունի 6 ձայնավոր հնչյուններ՝ ա, ի, ու, է(ե), օ(ո), ը,որոնք գրվում են ութ տառով. է հնչյունի համար ունենք երկու տառ՝ է և ե , իսկ օ ձայնավորի համար՝**օ** և **ո**: Նույնքան ձայնավորներ ուներ նաև գրաբարը: Բարբառներում հանդիպում են նաև այլ ձայնավորներ (օրինակ՝ քմայնացած):

Գործածության հաճախականությամբ առաջին տեղում **ա** ձայնավորն է, ապա՝ **է**-ն, հետո՝ մյուսները: Հայերենի բոլոր ձայնավորներն էլ վանկարար են, կազմում են վանկաբուն: Հնչյունափոխության նկատմամբ առավել զգայուն են է, ի, ու հնչյունները, շեշտադրությամբ, հնչեղությամբ հետին տեղում է ը ձայնավորը: Այժմանդրադառնանք վերջիններիս ուսուցման հնարներին և վարժություններին:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները:Ընդորում՝այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավնեն, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝վատը:Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար:Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը:Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի

բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար։Բացի այդ՝ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի։

Օրինակ՝խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»։Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է։Հետևաբար՝նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում։Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել։Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս։Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին։Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան։

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է։ Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել։Հետևաբար՝ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը։

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում։ Դասը սկսելուց առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը։ Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև։ Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը։

Այժմ ներկայացնենք մայրենիի 2=4-րդ դասարանների դասագրքերից ձայնավորների ուսուցման արդյունավետ վարժություններ՝

1. Օգնի՛ր «անհանգիստ տղային», որ նա տնակներում ճիշտ տեղադրի **օ** կամ **ո** տառերը։

ան_գուտ, ան_րոշ, ան_թևան, ձկն_որս, ան_գնական, փղ_սկր[17]։

[17]Սարգսյան Վ., Թորոսյան Կ., ԽաչատրյանՀ., Ջիլավյան Ե.,Մայրենի 3, մաս1, Եր., «ՄԱՆՄԱՐ» հրատ., 2020, էջ16։

2. Լրացրո՛ւ օժանդակ բայի բաց թողնված տառը՝ **է** կամ **ե**.

պատմում _ինք, կարդում _ր, չ_ի գրում, հաշվում _ին, չ_մ խաղում, հարցնում _ս, հանձնում _ք, չ_նք ասել, գումրում _ինք, չ_իք կարողանում[18]:

Արդյունավետ է նաև մի քանի վարժություններ, որոնք էլ ավելի արդյունավետ կդարձնեն ձայնավորների ուսուցումը:

Ձայնավորների ուսուցումը նկար-բառերով.

Օրինակ՝Կարող եք առանձին քարտերի վրա պատկերել նկարներ և աշակերտներին առաջարկել՝

1.1 Գտնել ձայնավորով վերջացող նկար-բառերը, գտած ձայնավորները կիրառել այլ բառերի մեջ:

1.2 Հանձնարարել աշակերտներին որոշել ձայնավոր հնչյունով սկսվող տրված նկար-բառերը, ապա նշել «ավելորդ» բառը:

1.3 Նշի՛ր՝ նկար-բառերից ո՞րն ունի երկու ձայնավոր հնչյուն:

1.4 Գտի՛ր՝ ո՞ր տնակում «բնակվող» բոլոր նկար-բառերն են վերջանում ձայնավորներով:

1.5 Գտի՛ր՝ ո՞ր շարքի նկար-բառերն են սկսվում միևնույն ձայնավորներով:

1.6 Նշի՛ր՝ ո՞ր գնացքով են «ճանապարհորդում» միայն երեք ձայնավոր ունեցող բառերը:



Վարժություններ ձայնավոր հնչյուններով.

1. է, ս, ի, տ, լ, ու, մ, օ, կ, ը, ա հնչյուններից որո՞նք են ձայնավորները:

2. Ձայնավոր հնչյունները փոխելով՝ստացի՛ր նոր բառեր:

Պատ, դար, սար, բառ, տող, տուն, վարք, վիզ, հարկ, գարի, կարճ:

[18]Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե.,Մայրենի 3, մաս 2, Եր., «ՄԱՆՄԱՐ» հրատ., 2020, էջ 125:

Պետ, դեր, սեր, բեռ, տեղ, տոն, վերք, վազ, գերի, կիրճ:

3. Շարունակի՛ր շարքը, գրի՛ր ձայնավորով վերջացող երեքական բառ:

Օրինակ՝գարի, կատու, ուսուցչուհի, այո, բարի:

4.Ձայնավորով սկսվող ու վերջացող հինգ բառ գրի՛ր:

Ուսուցչուհի, այո, Անի, Արա, Աննա:

5.Միևնույն ձայնավորով վերջացող հինգ բառ գրիր:

Արինա, Արա, Աննա, Ալինա, Արինա:

Սովորում ենք դասը դասարանում և կատարում ենք վարժություններ.

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ): ԴասըսկսելուշատհայտնիհինարէնանԳՈՒՍ-ը։Դասասկզբում ուսուցիչը գծում է աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝գիտեմ, կենտրոնում՝ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝սովորեցի բառերը։Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին։Ապա լրացվում է գիտեմ սյունակը։Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին։Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը։Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը։

Դասի սովորելու այս մեթոդը ավելի հիշվող է, երեխաները միանգամից սովորում են և՛ դասը, և՛ կատարում են դասին համապատասխան վարժություն:

Խմբային վարժություններ

Խաղեր խաղալ սիրում ենք բոլորս: Յուրաքանչյուր տարիքային փուլում մարդուն մի խաղի ձև է հրապուրում: Նախադպրոցական սաները խաղում են խաղալիքներով, տալիս նրանց անուններ, ստեղծում իրավիճակներ ու այդ խաղալիքներին ներգրավում դերերի մեջ, կրտսեր դպրոցականները նախընտրում են մրցույթներ, դեռահասները սիրում են խաղեր, որտեղ հստակ կանոններ կան: Իրականում խաղի բազմաթիվ տեսակներ կան, պարզապես ճիշտ ընտրություն է պետք կատարել: Կրտսեր դպրոցականների նախասիրություններն ուսումնասիրելով՝ կարելի է հասկանալ, որ անգամ ամենաբարդ թեման, տեքստը կարելի է խաղով սովորեցնել: Ահա այստեղ շատ կարևոր է մշակման ու մատուցման ձևը: Նաև անհրաժեշտ է ընտրել, թե խաղը խմբային համագործակցային է լինելու, թե անհատական: Սա ևս կարևոր է: Անդրադարձ կատարենք խմբային, մրցակցային ու ոչ մրցակցային

ստեղծագործական խաղերին: Ցանկացած խմբային խաղ սկսելուց առաջ նախաբան է անհրաժեշտ՝ կանոնները յուրացնելու համար: Այնուհետև պետք է տվյալ թիմի համար սահմանել դրույթներ, որպեսզի խաղի ընթացքում դրանք չխախտվեն, ապա պետք է բացատրել խաղի կանոններն ու խաղալ: Որպես դասակարգում՝ կարելի է ասել, որ խմբային խաղը կարող է լինել մրցակցային և ոչ մրցակցային, զարգացնող, լիցքաթափող, ժամանցային: Եվ ի վերջո, խաղերը նպաստում են սովորողների հոգեբանական, ինտելեկտուալ զարգացմանը, հաղորդակցման հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ներկայացնենք խաղային մի քանի վարժություններ:

Օրինակ՝*Միրելի՛ ընկեր, քեզ մաղթում եմ ամենա…*

Սա հաղորդակցման զարգացմանն ուղղված խաղ է: Այս խաղը մրցակցային չէ, չկան միավորներ և մեծ խումբը ենթախմբերի չի բաժանվում: Խաղն առավել ներգործում է զգացմունքային դաշտի վրա:Զայնավորների վերաբերյալ վարժություններ կատարելիս այն կարող է տալ լավ արդյունք թեման յուրացնելու համար: Վարժությունը տրվում է ամբողջ դասարանին և մեկը մյուսի հետևից փորձում են գտնել հարցաթերթիկի վրա գրված առաջադրանքների պատասխանները, հաջորդ մասնակիցը կարող է ուղղել նախորդ մասնակցի սխալը կամ կարող է առաջարկել իր տարբերակը: Այս տարբերակով ուսուցիչը կարող է իմանալ դասարանում եղած երեխաների գիտելիքները, արձանագրել երեխաների սխալները և ուղղել դրանք:

Բնույթով վերը նշված խաղին նման է **Հետևիր ինձ** խաղը, երբ սովորողները որևէ հետագծով միմյանց հետևից քայլում են ու քայլքի ընթացքում ավելանում ու պակասում են մասնակիցներ, իսկ խաղի առաջատարը պետք է ճկուն, ոլորապտույտ ճանապարհ անցնի: Այս խաղին առաջնորդը ինքն է ուղղում հարցեր մասնակիցներին, որից պարզ է դառնում և առաջնորդող աշակերտի և մնացած մասնակիցների գիտելիքները տվյալ թեմայից:

Մեծ հետաքրքրությամբ խաղում էին սովորողները: Միջանձնային հարաբերությունների կարգավորման, այն առավել խաղաղ ու ջերմ դարձնելու համար առաջնային է խմբային խաղ-աշխատանքը, որը երրորդ դասարանից սկսած մինչ դեռահասության տարիք կարելի է խաղալ:Կարևոր է մի հանգամանք, որ

խաղավարը ճիշտ մատուցի խաղի պայմանները, կանոնները և առաջացնի հետաքրքրություն դեպի խաղը:

Զարգացնող խաղերի կանոնները կարելի է աննշան փոփոխությունների ենթարկել:Ահա, օրինակ, *Ուշադրությունն ու հիշողությունը զարգացնող խաղ*ը կրտսեր դպրոցականների հետ խաղալիս երրորդ դասարանցիների հետ ավելի բարդ օրինակով ենք խաղում, քան առաջին դասարանի սովորողների հետ: Սակայն, խաղը բացի ուշադրություն ու հիշողություն զարգացնելը, նպաստում է նաև բառապաշարի ձևավորմանն ու զարգացմանը: Այս խաղը կարելի է խաղալ մրցակցային տարբերակով՝խումբը բաժանել ենթախմբերի ու տալ միավորներ: Նման մրցակցային խաղ է նաև *Նկարիր մեջքիս* և *Գտիր ձայնավորը* խաղերը:Խաղային այս վարժությունները հնարավորություն են տալիս դասը դարձնել երեխաների համար և՛ հետաքրքիր, և՛ օգտական թե՛ գիտելիքներ ձեռք բերելու և թե՛ միմյանց հետ աշխատելու, համագործակցելու կարողությունները զարգացնելու, միջանձնային հարաբերությունների, ճանաչողական գործընթացների կարգավորման առումով:

Այս բոլոր խաղերը կարելի է խաղալ 20-25 հոգանոց խմբերում:

Ես-Դու-Մենք[19]:Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում:Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում:Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը: Առաջադրանքները գրվում են քարտերի վրա, որնք վերաբերում են ձայնավորներին, օրինակ՝ Տվյալ բառերի ձայնավորները փոխարինի՛ր մեկ այլ ձայնավորով այնպես, որ ստացվի նոր բառ:

Բառերն են՝ բեր, գիր, սուր, տեր, գոլ:

Գտի՛ր ձայնավորով սկսվող և վերջացող բառերը և տվյալ ձայնավորը կիրառի՛ր այլ բառ ստանալու համար:

Բառերը՝ ձու, կատու, սեղան, ամպ, ամառ, գրիչ, աստղ,տանձենի, բերրի, մրրիկ, ոսկոր, արև, ինքնաթիռ, արմատ:

---

[19]ԽաչատրյանՍ., Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան2020, էջ 39

Գրի՛ր տրված բառերը՝լրացնելով անհրաժեշտ տառը (է կամ ե): Բացատրել բառերի իմաստ:

Հուշում՝երկու բառերում կարող են և՛տարբեր տառեր գրվել, և՛նույն տառը:

3. կինո-կրան

2. գետ-զր

Նշի՛ր բառերի ավելորդ ձայնավորը:

Բառերն են՝ մարոդ, բաժակի, անեգութ, թավիշյա, մրուջյուն, սայուն, գօրական, մանրէէ, շուքեղ, լուսավորի, մասենակի, ընետանիք:

Բաց թողած տեղերում լրացրու է կամ ե.

այժմ-ական, ամենա-ական, ան-րկյուղ, առ-րևույթ, առ-ջ, բազկ-րակ, գետ-զր, գոմ-շ, դող-րոցք, ելև-ջ, եղեր-րգ, երբև-, -լեկտրա-ռակցել, -մ, ինչևից-, մանր-, հն-աբան, մանր-աբան, չ-ն, չ-իր, որև-, չ-ինք, ստոր-րկրյա, և-թ, ափս-, տն-տուն, առօր-ական:

Բաց թողած տեղերում լրացնել օ կամ ո.

ականջ-ղ, ամեն-բյա, այդ-բինակ, այս-ր, անդ-բրություն, ան-թ, ան-ղնաշար, ան-ղ-ք, ան-բակ, ան-գտակար, ապ-բինի, բարձր-բակ, բար-բություն, գիշերուզ-ր, դեղնազ-ծ, երկար-բյա, եղբ-ր-բդի, հն-բյա, քնքշ-բեն, -թ-ց, -բըստ-բե, -ր-ցք:

Անհրաժեշտ տեղերում լրացնել ը.

ակ-նբախ, ամենա-նդունակ, այլ-նտրանք,առ-նթեր, գահ-նկեց, գիրկ-նդխառն, գործ-նկեր, գույ-նզգույն, երկ-նչել, զուգ-նթաց, թր-խկ, լուս-նկա, հյուր-նկալ, ձեռ-նտու, մակ-նթաց:

Այսպիսով, ուսումնասիրելով թեման, կատարելով համեմատությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ չնայած հայերենի ձայնավորները քանակով քիչ են, բայց ունեն բավականին դժվարություններ յուրացման գործում: Բայց անկախ դժվարություններից՝ ժամանակակից գիտությունները առաջարկում են այնպիսի մեթոդիկաներ, հնարներ և վարժություններ, որոնք կարող ենք համադրել ավանդական մեթոդների հետ, որոնց գործածությունը բերում է ցանկալի արդյունքի: Այս առաջադրանքները և վարժությունները կարող են լինել, ինչպես արդեն նշել ենք, անհատական և խմբակային, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները:

Համենայն դեպս պետք է նշել, որ յուրաքանչյուր մեթոդ և վարժություն յուրովի առանձնահատուկ է, պետք է կիրառել համապատասխան դասընթացի ժամանակ՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները: Մեր առաջարկած վարժությունները և մեթոդական հնարները համապատասխանում են տարրական դասարանի աշակերտների ունակություններին, որոնց գործածությունը կհանգեցնի ցանկալի արդյունքի ձայավորները յուրացնելիս: Կարծում ենք, որ առաջարկած վարժությունները կհեշտացնեն ձայնավորների յուրացման դժվարությունները:

2.2. Բաղաձայնների ուսուցման վարժությունների համակարգը, քերականական ուղղագրության մեթոդական հնարները

Ուսումնական աշխատանքի ճիշտ կազմակերպման, դրա արդյունավետության ու նպատակայնության համար ուսուցիչը, բացի իր մանկավարժական վարպետությունից և ուսուցման համար անհրաժեշտ պայմաններից, անպայման ձեռքի տակ պետք է ունենա տվյալ առարկայի պետական ծրագիրը, դասագիրքը կամ դասագրքերը և այդ առակայի մեթոդիկան: Առանց այդ երեք «պաշտոնական փաստաթղթերի» վրա հենվելու, դրանք ուսումնական աշխատանքի հիմքում դնելու, ուսուցիչը չի կարող ապահովել ուսուցման գործի ժամանակակից գիտամանկավարժական մակարդակը, ուստի և այսօր դպրոցն ու դասը դժվար է պատկերացնել առանց ծրագրի, դասագրքի և մեթոդիկայի:

Հայոց լեզվի քերականական և ուղղագրական մասը պետք է կազմել թեմատիկ սկզբունքով, ընդ որում՝ պետք է հիմքում ընկած լինեն լեզվական հիմնական թեմաները, որոնց շուրջ խմբավորված են նրա ենթաթեմաների և առանձին քերականական կարգերի կամ հասկացությունների ուսուցման, ամրակայման ու կիրառական վարժությունների համակարգն ու գրավոր աշխատանքների առաջադրանքները: Ուսուցման կառուցվածքի հիմքում ընկած են լեզվական տարրական գիտելիքները, իսկ ուղղագրությունը, որպես կանոն, ցրված է ամբողջ դասագրքի մեջ և մատուցվում է մանր բաժիններով: Այսպես թե՛ ընկալումն ու յուրացումն է հեշտ լինում և թե՛ սովորած օրենքներն ու օրինաչափությունները գործնականում կիրառելու և հենց գործնական աշխատանքի մեջ ու գործնական

աշխատանքի միջոցով դրանք ամրակայելու, սովորածը կիրառելու կարողություններ մշակելու հնարավորություն է ստեղծվում[20]:

Քերականական յուրաքանչյուր կարգի ուսուցումը կամ երեխաների մեջ այդ հասկացության ձևավորումն անցնում է որոշակի աստիճանավորումով՝ խոսքից կամ արդեն սովորած հասկացություններից նոր հասկացության անջատում և մատուցում, մատուցված հասկացության ամրակայում, որը տեղի է ունենում երկու աստիճանավորումով՝ ճանաչում կամ տարբերակում, վերլուծում կամ բացատրում և կիրառում: Վարժությունների այս համակարգը՝ իր դասարանական ու տնային, կոլեկտիվ ու անհատական աշխատանքների տարբերակներով ընկած է տարրական դասարանների հայոց լեզվի յուրաքանչյուր դասագրքի հիմքում: Սակայն ուղղագրության ուսուցումը հիմնականում տարվում է կիրառական վարժությունների միջոցով, ուստի այստեղ աշխատանքի մեջ բազմազանությունն ապահովվում է աշխատանքի ձևի և ոչ թե էության կամ նպատակի փոփոխությամբ: Ուղղագրության ուսուցման մեջ ավելի քան մայրենի լեզվի տարրական դասընթացի որևէ այլ բաժնում կարելի է կիրառել ծրագրավորված ուսուցման տարրերը՝ հիմնական աշխատանքը դնելով երեխաների ուսերին, քանի որ ավելի շատ ինքնուրույն աշխատանքի շնորհիվ է, որ մարդ կարող է վարժվել ավանդական գրություն ունեցող բառերի ուղղագրությանը[21]:

Տարրական դասարանի հայոց լեզվի մեթոդիկան կամ, ավելի ճիշտ՝ հայոց լեզվի տարրական դասընթացի մեթոդիկան բաղկացած է մի քանի հիմնական բաժիններից, որնցից ամեն մեկն ունի իր որոշակի բովանդակությունն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Քերականության մեթոդիկայում տրվում են հայոց լեզվի տարրական դասընթացի վերլուծությունը, այդ դասընթացի ստեղծման դիդակտիկական ու լեզվական համակարգի հիմուքները, դասընթացի տարբեր ենթաբաժինների ուսուցման սկզբունքներն ու մեթոդները, լեզվական վարժությունների համակարգը, զննականության գործադրման նպատակահարմար ձևերը, դասագրքերի կառուցվածքն ու օգտագործման եղանակները, ընթերցանության

[20]Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր.,«Լույս»հրատ., 1980թ.էջ 38

[21]Գասպարյան Մ., «Քերականության նուղղագրության ուսուցումը տարրական դասարաններում», Երևան, Ա. Հ.,1954, էջ 47

և խոսքի զարգացման մեթոդիկաների հետ քերականության կապն ու այդ կապերի ճիշտ ու արդյունավետ օգտագործումը և այլն:

Առանց սխալների գրել սովորելը բավական հեշտ չէ, քանի որ հայոց լեզուն համարվում է ամենադժվար լեզուներից մեկը ամբողջ աշխարհում: Միևնույն ժամանակ, ուսումնասիրության այսպիսի դժվարությունները մեծ հնարավորություններ են բացում տարբեր տեխնիկայի օգտագործման համար, զարդարում գրավոր և բանավոր խոսք:

Տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են աշակերտներն ու ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները:Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը:Ավելին,տեխնոլոգիաներն ուսանողներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21–րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:

Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Բազմաթիվ մասնագիտություններ, որոնք այսօր հարգի են, շուտով փոխարինվելու են մեքենաների և ռոբոտների աշխատանքով: Ահա այդ է պատճառը, որ հանրակրթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունեն: Մայրենի լեզվի ուսումնառության շեշտադրումը պիտի լինեն որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը:

Սովորաբար լեզվի հնչյունական համակարգի և այբուբենի համապատասխանություն գոյություն չունի: Տառերի գործածությունը կարգավորվում է ուղղագրությամբ մշակված կանոնների միջոցով:

Բառերի գրության, նրանց իմաստային մասերի կից և անջատ գրության, գլխատառերի գործածության, ինչպես նաև տողադարձի կանոնների համակարգը կոչվում է ուղղագրություն: Ուղղագրությունը խոսքի գրային հաղորդման ժամանակ կարգավորում է գրային նշանները, օգտվելով գրաբանության միջոցներից՝ սահմանում է բառերի գրության միօրինակությունը: Ուղղագրությունը որոշում է գրության նորմերը, որոնք ընդունված են յուրաքանչյուր լեզվում՝ նրա զարգացման որոշակի փուլում: Նա նորմերը պարտադիր են տվյալ լեզվով գրող հանրության համար:

Տառադարձությունը որևէ լեզվի հնչույթների և արտասանական առանձնահատկությունների հաղորդումն է միջազգային հնչյունական այբուբենի կամ մեկ այլ լեզվի պայմանական գրության միջոցով: Տառադարձությունը օգտագործվում է գիտական զանազան նպատակներով:

Գրադարձությունը տառադարձության մի ձև է, երբ մի լեզվի այբուբենի տառերը, գրային նշանները վերածվում, փոխարինվում են մեկ այլ այբուբենի տառերով, գրանշաններով՝ օգտագործելով գրությունների համարժեքներ:

Գրադարձության հիմնական նպատակն է գրային նշանների արտահայտումը և ոչ թե տվյալ տառի նշանակած հնչյունի արտասանության վերաարտադրությունը, որը բուն տառադարձությանն է վերաբերում:

Ուղղագրության հիմքում կարող են ընկնել մի քանի սկզբունքներ՝ հնչյունական, ձևաբանական, ստուգաբանական, ավանդական:

Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության հիմքում ընկած են հիմնականում պատմական կամ ավանդական և հնչյունաբանական սկզբունքները: Պատմական կամ ավանդական սկզբունքը ենթադրում է բառերի այնպիսի գրություն, երբ բառերի տառային կազմը համապատասխանում է ոչ թե նրանց ժամանակակից, այլ հին, մեր ժամանակներում արդեն հնացած արտասանությանը:

Հնչյունական սկզբունքն ընդունում է բառերի այնպիսի գրություն, երբ բառերի տառային կազմը առավելագույն չափով մոտենում է նրանց հնչյունական կազմին: Այս դեպքում տառերը գրվում են նրանց հնչման համաձայն:

Հնչյունական կամ ավանդական ուղղագրության դեպքում հաճախ հնարավոր չէ խուսափել ստուգաբանական սկզբունքից, և գրության ժամանակ հաշվի է առնվում նաև բառի ծագումն ու նրա նախնական կազմությունը:

Հնչյունական գրությունը հիմնականում բխում է գրական արտասանությունը գրքային մոտեցնելու միտումից[22]:

Ուսումնառության գործընթացում շեշտադրվում են սովորողի անհատականությունը, անձնային ներդաշնակ զարգացումը, սովորելու ոճը, հետաքրքրությունների և կարիքների շրջանակը: Սովորողը նախագծում և իրականացնում է տարաբնույթ հետազոտություններ: Տարբերակված ուսուցում. Ուսումնառության բովանդակությունը, կրթական միջավայրը, տրվող առաջադրանքները, չափորոշչային պահանջները ձևավորվումեն՝հաշվի առնելով սովորողի անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները, պահանջները, կարողությունները:

Հաշվի առնելով վերը նշվածները՝ մայրենի 3-րդ և 4-րդ դասարանի դասագրքերից ներկայացնենք բաղաձայնների ուսուցման վարժություններ, որոնք հնարավորություն կտան տարրական դասարանի աշակերտներին ընդհանուր պատկերացում կազմել բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ և հաղթահարել ուսումնառության ընթացքում առաջացած դժվարությունները:

Այս տեսակ վարժությունները հնարավորություն կտան կրկնել բաղաձայնների ուղղագրության մասին ունեցած գիտելիքները և գործնականում կկիրառեն կարողությունները:Առաջադրանքը կատարելիս սովորողները կամրապնդեն բաղաձայնների ուղղագրության մասին ունեցած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների զարգացմանը:

Օրինակ՝

Բառե՛ր գրիր, որոնց կազմում կրկնվող բաղաձայն կլինի:

Նմուշ՝ **դդ**ում, **ան**ման[23]:

Արդյունավետ են նաև մի քանի վարժություններ, որոնք էլ ավելի արդյունավետ կդարձնեն բաղաձաձայների ուսուցումը:

---

[22]ՍուքիասյանԱ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2004թ., էջ 47
[23]ԳյուրջինյանԴ., ՀեքեքյանՆ., Մայրենի 3, մաս 2, «ԷդիթՊրինտ» հրատ., 2011, էջ 83:

1. Կռահի՛ր՝որ տառով է ավարտվում առաջին բառը և սկսվում երկրորդը:

   Գրի՛ր այդ տառը:

   1. Գևոր-
   2. –արիկ

3. Գտի՛ր՝ որ տառը պետք է տեղադրել տրված բառում:

   դեղ (ծ, ձ)

4. Գտի՛ր՝ որ տառը պետք է տեղադրել դատարկ վանդակում բառեր ստանալու համար (դ, թ, տ):



5. Գտի՛ր՝որ բառն է սխալ գրված:

փորձել

թռչել

աֆտոբուս

6. Մտածի՛ր՝որ բառն է սխալ գրված:

   Արտագրի՛ր այդ բառը՝գրելով ճիշտը:



7. Ի՞նչ ես կարծում՝որ տառը պետք է գրել բաց թողած տեղում:

   Արտագրի՛ր բառը՝լրացնելով բաց թողած տառը:

   Թ-չուն

8. Ընտրի՛ր՝որ բառերն են պատկանում «խաբել» բառի ուղղագրությանը:

   բլուր, շաբաթ, ուրբաթ, բաժակ:

9. Անգետիկը գրատախտակին գրել էր մի քանի բառ:

Գտի՛ր՝ քանի բառ է սխալ գրել Անգետիկը:

10. Առաջին բուն երկրորդին ուզում է հյուրասիրել գ-ով գրվող անուն ունեցող կոնֆետով:

Մտածի՛ր՝որ կոնֆետն է դա: Գրի՛ր այդ անունը:



11.Որոշի՛ր և գրի՛ր միայն այն պատկերի անվանումը, որը սկսվում է բաղաձայնով:



12.Համապատասխան այունակներում արտագրի՛ր ձայնավորով և բաղաձայնով սկսվող բառերը:

Բառեր՝ օճառ, շուկա, բադ, շուն, գիրք, ամառ, առյուծ, գրատախտակ, տետր, մարդ, օդապարիկ, ինքնաթիռ, կատու, ուլ, այծ, ձեռք:

Ձայնավորով սկսվող բառեր	Բաղաձայնով սկսվող բառեր

13. Ի՞նչ ես կարծում՝քանի բառ է սխալ գրել Քաջ Նազարն իր գրած նախադասության մեջ: Դուրս գրի՛ր սխալ գրված բառը և գրի՛ր ճիշտ ձևը:



Աշխատանքում ընդգրկված վարժությունները նպաստում են սովորողների՝բաղաձայնների ուղղագրության մասին ունեցած գիտելիքների արդյունավետ յուրացմանը:

Բացի անհատական վարժություններից, արդյունավետ են նաև **խմբային աշխատանքները**, որոնք նպաստում են ոչ միայն տվյալ նյութի յուրացման, այլև լավագույն միջոցն են աշակերտների միջանձնային հարաբերությունների ստեղծման համար: Ինչպես արդեն նշել ենք վերևում, խմբային աշխատանքների լավագույն օրինակ է հանդիսանում խաղային եղանակներով թեմայի յուրացումը:

Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով:

Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները, որոնք կատարում են երկու կարևոր գործառույթ.

— նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,

— խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը:

Խաղի յուրաքանչյուր տեսակ երեխայի զարգացմանը նպաստող ուրույն մեթոդ է: Հետաքրքիր խաղային մեթոդ է երևակայական իրադրությունների խաղարկումը, որի

ընթացքում երեխան գիտելիքներ և կարողություններ է ձեռք բերում դերային գործողությունների միջոցով:

Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտությունները և մոդելավորումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն մեթոդները) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը:Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են:

Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեթոդի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

Փոխգործուն ուսուցման սկզբունքներն են.

— փոխազդեցությունը, փոխուսուցումը,

— երեխայի ակտիվությունը,

— համագործակցությունը,

— ինքնարտահայտման խրախուսումը,

— հետադարձ կապը:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

— երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը,

— հետաքրքրությունների բացահայտումը,

— համագործակցային կարողությունների զարգացումը,

— անհատական առանձնահատկությունների բացահայտումը,

Փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման ընդհանուր բանաձևեր չկան: Ցանկացած խումբ, պարապմունք եզակի է և անկրկնելի: Դաստիարակի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել հստակ իրավիճակին, իր ունեցած

մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:

Ներկայացնենք խաղային տարբերակով բաղաձայնների ուղղագրության յուրացման մի քանի վարժություններ:

1. Դասարանը բաժանել խմբերի և կազմակերպել մրցույթային խաղեր: Այս տեսակ խաղի կազմակերպումը կարելի է կազմակերպել թեման յուրացնելուց հետ: Յուրաքանչյուր խմբի հանձնարարել նախօրոք հարցեր կազմեն: Դասի ժամանակ խումբը կառավարի աշակերտներից մեկը, սովորողները հարցերը գրեն թերթիկի վրա և փոխանցեն մյուս խմբին: Խմբում մի աշակերտ պատասխանի հարցին, իսկ մյուս խմբի սովորողները լրացնեն պատասխանը, եթե ունենան լրացումներ:

2. Նախապես խմբերի բաժանված դասարանին բաժանել տերևանման քարտեր, որտեղ գրված են ուղղագրության վերաբերյալ հարցեր: Օր.՝

Սովորաբար բաղաձայնները գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Սակայն ոչ բոլոր բաղաձայն հնչյունների գրությունն է համապատասխանում արտասանությանը:

Տրված բառերում որտե՞ղ է բ-ն կարդացվում փ:

ուրբաթ, դարբին, երբ, իբրև, խաբել, Հակոբ, համբերել, համբույր, դարբին, հարբել, նուրբ, շաբաթ, Գաբրիել:

*Ո՞ր տառերից հետո է լսվող **ք** հնչյունը գրվում **գ** տառով, իսկ **թ** հնչյունը՝ **դ** տառով:Գրե՛ք օրինակներ:*

Բաղաձայնից առաջ խ է արտասանվում, բայց ղ է գրվում: Գրե՛ք օրինակներ:

Նավթ, ավտո, հարավ և դրանցով կազմված բառերում վ տառը ինչպե՞ս է արտասանվում:

Ի՞նչ ես կարծում՝քանի բառ կա բառաշարքում, որոնցում լսվող ց-ն գրվում է ձ-ով:

Տետրում գրի՛ր այնպիսի բառեր, որոնց մեջ չ տառը լինի առաջինը, երկրորդը, երրորդը:

Այս և նմանատիպ առաջադրանքներ ենք գրում, որոնց շնորհիվ սովորողները կյուրացնեն նաև համապատասխան կանոնները: Առաջադրանքը ավարտելուց հետո խմբավարը տերևները փակցնում է պատի վրա ամրացված թղթե ծառին: Որ խումբը արագ կատարի առաջադրանքը, կհամարվի հաղթող:

3. *Ես ասեմ, դու ուղղիր*: Այս խաղը շատ օգտակար է երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու և գիտելիքները ստուգելու գործում: Խմբում եղած աշակերտները գրում են սխալ ուղղագրությամբ բառեր և կանոններ ու փոխանցում են մյուս խմբին: Մյուս խմբի սովորողները ուղղում են սխալները և բերում են օրինակներ:

Վարժությունների այս շղթան կարելի է անվերջ շարունակել, պարզապես պետք է արձանագրել, որ յուրաքանչյուր դաս պահանջում է յուրովի մոտեցում, յուրաքանչյուր սովորող և դասարան պահանջում է յուրովի դասընթաց: Մանկավարժը պետք է կարողանա համադրել դասարանում եղած աշակերտների հնարավորությունները և դասընթացին օգտագործվող մեթոդները և հնարները: Յուրաքանչյուր սովորող անհատականություն է և պահանջում է անհատական մոտեցում: Մանկավարժը պետք է կարողանա բացահայտել և գործածել տվյալ աշակերտի հնարավորությունները և գիտելիքները:

Դասի պլան

Դասարան– Երրորդ

Դասի տևողությունը – 45 րոպե

Առարկան – Մայրենի

Դասի թեման – «Ամենից լավ տունը»

Դասի տիպը – Նոր նյութի հաղորդում

Կիրառված մեթոդները– Զրույց, բանավոր հարցուպատասխան, մտքերի տարափ

Դասի կահավորումը - Պաստառ՝**o-n** տառերի ուղղագրության վերաբերյալ, նկարներ, գիրք:

Դասի նպատակը՝

1.Գիտելիքների համակարգ

- Արտահայտիչ կընթերցեն բանաստեղծությունը՝ ուշադրություն դարձնելով առոգանության նշաններին:
- Կամրակայեն բարդ բառերի ուղղագրության վերաբերյալ ունեցած գիտելիքները:

2.Կարողությունների և հմտությունների համակարգ

- Կկարողանան առանձնացնել նկարագրական հատվածները, արձակ ձևով կվերարտադրեն բանաստեղծությունը՝ համառոտ կամ ընդարձակ ձևերով կարտահայտեն իրենց կարծիքը հերոսի բնավորության և վարքագծի վերաբերյալ:

3. Արժեքայինհամակարգ

- Դաստիարակել սեր դեպի հայրենի տունն ու օջախը, հայրենիքը:

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ

Երեխաներին նոր նյութի ընկալմանը նախապատրաստելու նպատակով կիրառել «Զրույց» մեթոդը: Այդ նպատակով առաջադրել հետևյալ հարցերը՝

- Տունը միայն բնակարա՞ն է:
- Ի՞նչ եք հասկանում «հայրենի տուն» ասելով:

Երեխաների կարծիքները լսելուց հետո ուսուցիչը հավելում է, որ հայրենի տունը մեր հայրենիքն է, ծննդավայրը, մեր ծնողները, մեր հողն ու ջուրը, մեր նախնիները, մեր

պատմությունը: Հայրենի տունը մեր մանկությունն է: Հայրենիքն ու հայրենասիրությունը սկսվում են հայրենի տնից: Եվ քանի որ հայրենի բառն էլ հայր արմատից է, հայրենի տունն էլ մեզ համար նույնքան քաղցր ու հարազատ է, որքան մեր ծնողները:

Իմաստավորման փուլ

Կկարդան բանաստեղծությունը

Ընթերցումից հետո ուսուցիչը տալիս է հարցեր եզրահանգումներ կատարելու նպատակով.

- Որտե՞ղ էր ապրում անհանգիստ տղան:
- Քո կարծիքով ինչու՞ էր տղան անհանգիստ:
- Ինչու՞է հեղինակը տղայի տունը համարում ամենից լավ տունը:

Կկատարենք բառային աշխատանք՝ բացատրելով *խրճիթ* բառի իմաստը:

Կկատարեն աշատանք լեզվական գիտելիքների շուրջ.

Բարդ կամ ածանցավոր բառերում ձայնավորով սկսվող արմատների ուղղագրության մասին գիտելիքների ամրակայման նպատակով կարելի է առաջադրել հետևյալ **խաղ –մրցույթը:**

Դասարանը բաժանվում է երեք խմբի: Գրատախտակին գրվում են բառեր, որտեղ բաց է թողած **օ** կամ **ո** տառը: Յուրաքանչյուր մասնակցի ձեռքին տրվում է այդ երկու տառերը: Տրվում է հրահանգ.

- Օգնեք անհանգիստ տղային, որ նա բաց թողած տեղում (ընդ որում՝այդ տեղերում կարելի է նկատել փոքրիկ տնակներ) ճիշտ տեղադրի **օ** կամ **ո** տառը:

Հրահանգը տալուց հետո յուրաքանչյուր խմբի առաջին մասնակիցը վազում է և բաց թողած տեղում տեղադրում **օ** կամ **ո** տառը, ապա վերադառնում է, խփում հաջորդ երեխայի ձեռքին վազում է այդ երեխան և այդպես շարունակ:Հաղթում է այն խումբը, որը ճիշտ և արագ է տեղադրում **օ** կամ **ո** տառը համապատասխան տնակում:

Հանձնարարել նաև հետևյալ վարժությունները.

1.Բաց թողնված տեղերում լրացնել **օ** կամ **ո:**

Ամենա_բինակելի, ան_որակ, ան_թևան, ան_ղնաշար, գիշեր_թիկ:

2. Օդ, օրինակ, օգուտ, օղ, օր բառերից կազմի՛ր ուրիշ բառեր՝ դրանք գործածելով բառի տարբեր դիրքերում:

Օրինակ՝**օրոր** - **օրոր**ոց, մեղմ**օրոր**

Ստուգել առաջադրանքների կատարումը:

Կշռադատման փուլ

Ֆիզդաստար:

Մեկնաբանել առածների իմաստը և գրել հրաշք տետրում

- Օտարության մեջ ապրողի հացը դառն է, ջուրը՝ թույն:
- Օտար տեղ ապրողի համար մի օրը մի տարի է:

Կկիրառե՞ք այդ խորհուրդները ձեր կյանքում. ո՞րը և ինչու՞:

Տնային աշխատանք հանձնարարել՝ սովորել անգիր «Ամենից լավ տունը» բանաստեղծությունը:

Դուրս գրել **o - n** – ի ուղղագրություն ունեցող բառեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարած աշխատանքի արդյունքում մենք հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

1.Ուսումնասիրությունը փաստեց, որ շատ արդյունավետ կլինի օգտագործել գործնական առաջադրանքներ, մեթոդներ ու վարժությունների հնարներ, որոնք ավելի հեշտ կդարձնեն ուղղագրական հմտությունների ուսուցումը: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, և նա պետք է ընտրի, թե տվյալ դասի ընթացքում ինչ մեթոդ կիրառի, որն է առավել արդյունավետ՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային և կազմաբնախոսական առաձնահատկությունները: Ամեն մի մեթոդի տեսակ սովորողների մեջ ձևավորում է որոշակի հմտություններ ու կարողություններ:

2. Այսպիսով, զննական և գործնական մեթոդները կիրառվում են հիմնականում արդեն աշակերտներին տրված թեմայից հետո երեխաների գիտելիքների ստուգման համար որպես լավագույն տարբերակներ, որոնք բոլորն էլ տալիս են հնարավորություն ուսուցչին պարզելու աշակերտների ունեցած գիտելիքներն արդեն սովորած թեմայից:

3. Յուրաքանչյուր մեթոդ և վարժություն յուրովի առանձնահատուկ է, պետք է կիրառել համապատասխան դասընթացի ժամանակ՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները և ունակությունները: Մեր առաջարկած վարժությունները և մեթոդական հնարները համապատասխանում են տարրական դասարանի աշակերտների ունակություններին, որոնց գործածությունը կհանգեցնի ցանկալի արդյունքի ձայնավորները յուրացնելիս: Առաջարկված վարժությունները կհեշտացնեն ձայնավորների յուրացման դժվարությունները:

4. Բաղաձայնների ուսուցման վարժությունները հնարավորություն կտան տարրական դասարանի աշակերտներին ընդհանուր պատկերացում կազմել բաղաձայնների ուղղագրության մասին ունեցած գիտելիքները և կարողությունները կիրառել գործնականում: Քերականական ուսուցման ձևավորումն անցնում է որոշակի աստիճանավորումով խոսքից կամ արդեն սովորած հասկացություններից նոր հասկացության անջատում և մատուցում, մատուցված հասկացության ամրակայում, որը տեղի է ունենում երկու աստիճանավորումով՝ ճանաչում կամ տարբերակում, վերլուծում կամ բացատրում և կիրառում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղրամյան Ռ., Հայերենի ուղղագրությունը և նրա ուսուցման հարցերը, Երևան, Հայպետհրատ, 1957, 172 էջ:
2. Գասպարյան Մ., Քերականության և ուղղագրության ուսուցումը տարրական դասարաններում, Երևան, Ա. Հ., 1954, 140 էջ:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ., 2018, 344 էջ:
4. Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, ԵՊՀ հրատ., 1978, 326 էջ:
5. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, մաս 2, «Էդիթ Պրինտ» հրատ., 2011, 80 էջ:
6. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ,Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, 74 էջ:
7. Խաչատրյան Ս., Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը տարրական դասարաններում, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի հրատ., Գյումրի, 2002:
8. Ղարիբյան Ար., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947, 240 էջ:
9. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի 3, մաս 1, Եր., «ՄԱՆՄԱՐ» հրատ., 2020, 88 էջ:
10. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի 3, մաս 2, Եր., «ՄԱՆՄԱՐ» հրատ., 2020, 80 էջ:
11. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, 352 էջ:
12. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980, 356 էջ: